



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հուլիսի 2023 թվականի N 274 -Ա

**«ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՏՆՕՐԵՆ ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված կարգի 85-րդ կետով և հիմք ընդունելով «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի 2023թ. հուլիսի 25-ի «Մրցույթում հաղթող ճանաչելու մասին» N 3 որոշումը և եզրակացությունը՝

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.**

«Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Անիկ Գրիգորյանի հետ 2023թ. հուլիսի 27-ից կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով, ազատելով նրան նույն կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պարտականությունների կատարումից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2023թ. հուլիսի 26  
ք. Կապան



**Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**